ԿԴ3/0993/02/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 հոկտեմբերի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ դիմումի Նարինե Գևորգյանի՝ Մելքոն Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Նարինե Գևորգյանը 2020 թվականի օգոստոսի 7-ին դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Մելքոն Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին: Նույն դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ:

2. Նույն դատարանի 2022 թվականի հունիսի 24-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հոկտեմբերի 17-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ն.Գևորգյանը Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին դիմումին կից ներկայացրել է վերջինիս անձնագրի պատճենը, որում որպես հաշվառման հասցե նշված է ք. Նոր Հաճն, Պարգևաշեն թաղամաս, տուն 13[1]:

6. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Ա.Մկրտչյանը 2020 թվականի սեպտեմբերի 28-ի գրությամբ հայտնել է, որ Մ.Կարապետյանը 2019 թվականի սեպտեմբերի 5-ից հաշվառված է ք. Երևան, Դավթաշեն 2 թաղամաս, 2-րդ շենք, բնակարան 20 հասցեում[2]:

7. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասին, 25-րդ հոդվածի 2-րդ մասին, 256-րդ հոդվածին՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 24-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հետևյալ հիմնավորմամբ. *«(…) [Օ]րենսդիրը անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը պայմանավորել է անհայտ բացակայող ճանաչվող անձի վերջին հայտնի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ վերջին հայտնի բնակության վայրի հասցեով, իսկ եթե գործը տվյալ Դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ,*

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, էջ 8:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, էջ 28:

ապա սահմանվել է տվյալ գործը քննող Դատարանի՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու կառուցակարգը:

Ընդ որում, քննարկվող դեպքում կարևոր է ընդգծել, որ նշված հանգամանքը հնարավոր է եղել պարզել միայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ուղարկված գրությունը ստանալուց հետո, երբ արդեն իսկ անձին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումն ընդունվել էր վարույթ և հրավիրվել էր դատական նիստ (ակնհայտ է, որ դիմումը վարույթ ընդունելու ժամանակ Դատարանը հնարավորություն չուներ պարզելու անհայտ բացակայող ճանաչվող անձի վերջին հայտնի հաշվառման վայրի հասցեն), այդ իսկ պատճառով դիմումի ընդդատության հարցին հնարավոր է եղել անդրադառնալ արդեն իսկ հրավիրված դատական նիստում:

Արդյունքում պարզվել է, որ անհայտ բացակայող ճանաչվող անձի վերջին հայտնի հաշվառման վայրի հասցեն ի սկզբանե եղել է հետևյալը՝ «ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 2 թղմ. շ. 2, բն. 20 հասցեն», որն ընդգրկված է Երևան քաղաքի վարչական տարածքում:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի հիմքով քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումն ընդդատյա է նշված հասցեն ընդգրկող ընդհանուր իրավասության դատարանին:

Վերը նշված իրավական վերլուծությունների և սույն գործի տեղեկությունների համադրության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, այսինքն՝ Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումը ոչ թե հետագայում է դարձել ընդդատյա այլ դատարանի, այլ ի սկզբանե ընդունվել է ընդդատության կանոնների խախտմամբ:

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանությունները, ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի, 25-րդ և 256-րդ հոդվածների պահանջներից՝ Դատարանը եկել է այն եզրահանգման, որ թիվ ԿԴ3/0993/02/20 քաղաքացիական գործը ենթակա է հանձնման այլ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»[3]*:*

---

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, էջ 49-51:

8. 2022 թվականի հոկտեմբերի 10-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով. *«(…) Մելքոն Անդրանիկի Կարապետյանը 05.09.2019 թվականից հաշվառված է ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թղմ., շենք 2, բնակարան 20 հասցեում, սակայն սույն գործով դիմումը ներկայացնելու պահին վերջինիս վերջին հայտնի հաշվառման վայրը հանդիսացել է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճն, Պարգևաշեն թաղամաս, 13 փունը, ուստի ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 14.09.2020 թվականին դիմումը վարույթ է ընդունել տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ, ու թեև ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 30.09.2020 թվականին մուտքագրված Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 28.09.2020 թվականի թիվ 8-58199 գրությամբ հայտնի է դարձել այլ հաշվառման վայրի հասցե, սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործը պետք է շարունակվեր քննվել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:*

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա այն սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է նույն օրենսգրքի 24-րդ (Բացառիկ տարածքային ընդդատությունը) կամ 138-րդ (Հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման հետ կապված վնասների հատուցումը) հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործերին:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասին, ապա այն կրկին սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ նախ այն վերաբերում է ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործերին (իսկ սույն դեպքում Դատարանը գտնում է, որ գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ), բացի այդ, նշված նորմի կիրառման համար պայման է հանդիսանում մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը գործը տվյալ դատարանում քննելու

վերաբերյալ պատասխանողի առարկելու հանգամանքը, իսկ սույն գործը քննվում է հատուկ վարույթի կարգով, որտեղ առկա չեն դատավարության կողմեր: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԿԴ3/0993/02/20 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Նարինե Գևորգյանի՝ Մելքոն Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 256-րդ հոդվածի համաձայն՝ *«Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է նրա վերջին հայտնի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ վերջին հայտնի բնակության վայրի առաջին ատյանի դատարան»:*

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի»*:

11. Նախորդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը ենթակա է քննության քաղաքացու **վերջին հայտնի հաշվառման վայրի կամ բնակության վայրի** առաջին ատյանի դատարանում: Այսինքն՝ տվյալ պարագայում տարածքային ընդդատության հատուկ կանոնի համաձայն՝ քաղաքացուն անհայտ բացակող ճանաչելու դիմումը ենթակա է ներկայացման ըստ անհայտ բացակայող ճանաչման ենթակա անձի՝ այն հաշվառման կամ բնակության վայրի հասցեով, որը **հայտնի է եղել որպես փաստացի վերջին հաշվառման կամ բնակության վայրի** հասցե:

---

[4] Տե՛ս քաղաքացիական գործը, էջեր 38-40:

Միաժամանակ, եթե դիմումը ներկայացվել է քաղաքացու վերջին հայտնի հաշվառման վայրի առաջին ատյանի դատարան, և այն վարույթ ընդունվել, սակայն հետագայում անձի հաշվառման կամ բնակության հասցեն փոխվել է և դիմումն ընդդատյա է դարձել այլ դատարանի, ապա Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործը պետք է ըստ էության քննվի այդ նույն դատարանում, թեկուզև անձի հասցեի փոփոխության հետևանքով գործն ընդդատյա է դարձել այլ դատարանի: Մինչդեռ, եթե ի սկզբանե դիմումը ներկայացված է եղել այնպիսի դատարան, որի տարածքային ընդդատությունը չի ներառել անհայտ բացակայող ճանաչման ենթակա անձի փաստացի վերջին հաշվառման կամ բնակության վայրի հասցեն, ապա գործը ենթակա է հանձնման այդ հասցեն ներառող դատարան՝ Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանների բացակայության պատճառով:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- 2020 թվականի օգոստոսի 7-ին Ն.Գևորգյանը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին դիմում՝ կցելով Մ.Կարապետյանի անձնագրի պատճենը, որում որպես հաշվառման հասցե՝ նշված է ք. Նոր Հաճն, Պարգևաշեն թաղամաս, տուն 13[5],

- 2020 թվականի սեպտեմբերի 24-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում[6],

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Ա.Մկրտչյանը 2020 թվականի սեպտեմբերի 28-ի գրությամբ հայտնել է, որ Մ.Կարապետյանը 2019 թվականի սեպտեմբերի 5-ից հաշվառված է ք. Երևան, Դավթաշեն 2 թաղամաս, 2-րդ շենք, բնակարան 20 հասցեում[7],

---

[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- 2022 թվականի հունիսի 24-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել քաղաքացիական գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին: Դատարանը նշել է, որ օրենսդիրն անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը պայմանավորել է անհայտ բացակայող ճանաչվող անձի վերջին հայտնի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ վերջին հայտնի բնակության վայրի հասցեով, իսկ եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, ապա սահմանվել է տվյալ գործը քննող դատարանի՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու կառուցակարգը: Գործի փաստական հանգամանքները համադրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի, 25-րդ և 256-րդ հոդվածների պահանջների հետ՝ դատարանը եկել է այն եզրահանգման, որ թիվ ԿԴ3/0993/02/20 քաղաքացիական գործը ենթակա է հանձնման այլ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը[8],

- 2022 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին: Դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի ուժով գործը պետք է շարունակվեր քննվել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Միաժամանակ, դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է նույն օրենսգրքի 24-րդ (բացառիկ տարածքային ընդդատությունը) կամ 138-րդ (հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման հետ կապված վնասների հատուցումը) հոդվածներով սահմանված կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործերին:

Միաժամանակ, անդրադառնալով Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասին՝ դատարանը նշել է, որ այն սույն դեպքում ևս կիրառելի չէ, քանի որ վերաբերում է

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործերին (իսկ սույն դեպքում գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ)։ Բացի այդ, նշված նորմի կիրառման պայման է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պատասխանողի առարկելու հանգամանքը, իսկ սույն գործը քննվում է հատուկ վարույթի կարգով, որտեղ առկա չեն դատավարության կողմեր[9]։

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով Ն.Գևորգյանի կողմից Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը չի ներկայացվել Մ.Կարապետյանի փաստացի վերջին հաշվառման վայրի առաջին ատյանի դատարան։ Մասնավորապես, Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը 2020 թվականի օգոստոսի 7-ին ներկայացվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այն դեպքում, երբ դեռևս 2019 թվականի սեպտեմբերի 5-ից Մ.Կարապետյանը հաշվառված է եղել Երևան քաղաքի դատական տարածքն ընդգրկող հասցեում (ք. Երևան, Դավթաշեն 2 թաղամաս, 2-րդ շենք, բնակարան 20 հասցեում)։ Այսինքն՝ Օրենսգրքի 256-րդ հոդվածի իմաստով՝ անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու պահին Մ.Կարապետյանի վերջին հաշվառման վայրը ներառել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական տարածքը։

Հետևաբար, Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սույն գործը չի կարող շարունակել ընդդատյա լինել այն վարույթ ընդունած՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին՝ հաշվի առնելով, որ տվյալ գործը ոչ թե հետագայում է դարձել ընդդատյա, այլ ի սկզբանե ընդդատյա է եղել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին։ Նման պայմաններում, Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից

[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը։

Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը չի կարող համարվել տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված:

Ուստի, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում բացակայում են Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանները, Մ.Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու վերաբերյալ դիմումը չի կարող ըստ էության քննվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում և ենթակա է հանձնման Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Վերոգրյալ պատճառաբանությամբ գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԿԴ3/0993/02/20 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Նարինե Գևորգյանի՝ Մելքոն Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԿԴ3/0993/02/20 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Նարինե Գևորգյանի՝ Մելքոն Կարապետյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**